ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 06.07.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/158

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 15.06.2021թ. թիվ 26/26-1/9633-2021 գրությամբ «ՕԿԵՏՄ» ՕՕՕ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 08.06.2021թ. թիվ Ե/40/1462-21 գրության հիման վրա, 15.06.2021թ. թիվ 26/26-1/9633-2021 գրությամբ նախաձեռնել է «ՕԿԵՏՄ» ՕՕՕ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «ՕԿԲՄ» ՕՕՕ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«ՕԿԲՄ» ՕՕՕ-ի կողմից Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Ընկերությունը պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/158 ընթացակարգի քննության նպատակով 21.06.2021թ. ժամը 10:25-ին և 06.07.2021թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 08.06.2021թ. թիվ Ե/40/1462-21 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում եմ Ձեզ, որ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲ ընկերության կողմից (այսուհետ՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ) սեփական կարիքների համար շրջանառու պոմպերի (ԳԼՀ-317) պահեստամասերի ձեռքբերման նպատակով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի և 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի հիման վրա հրապարակվել է «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-1/21» ծածկագրով գնման ընթացակարգը, որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև ՌԴ ռեզիդենտ հանդիսացող ՕՕՕ «ՕԿԲՄ»-ը: Մասնակցության հայտի գնահատման արդյունքում՝ գնահատող հանձնաժողովի ս/թ մարտի 25-ի թիվ 3 որոշմամբ ՕՕՕ «ՕԿԲՄ»-ը ճանաչվել ընտրված մասնակից, և ս/թ ապրիլի 30- ին ՕՕՕ «ՕԿԲՄ»-ի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև կնքվել է գլխավոր շրջանառու պոմպերի (ԳԼՀ- 317) պահեստամասերի մատակարարման թիվ HAEK-BMAPDzB-1/21-01/070 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի 8.13 կետի համաձայն ս/թ մայիսի 6-ին լրացուցիչ համաձայնագրի նախագիծը ներկայացվել է ՕՕՕ «ՕԿԲՄ»-ի դիտարկմանը և առաջարկվել 15 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել իր կողմից ստորագրված լրացուցիչ համաձայնագիրը և, քանի որ հատկացված ֆինանսական միջոցները գերազանցել են

բազային միավորի քսանհինգապատիկը, երաշխիքի կամ կանխիկ գումարի տեսքով ձևակերպված պայմանագրի և որակավորման ապահովումները:

ՕՕՕ «ՕԿԲՄ»-ի կողմից լրացուցիչ համաձայնագրի և պայմանագրի և որակավորման ապահովումների ներկայացման վերջնաժամկետի ավարտին՝ ս/թ մայիսի 27-ին, ՕՕՕ «ՕԿԲՄ»-ից ստացվել է գրություն, որով ընկերությունը ներկայացրել է կողմից ստորագրված լրացուցիչ համաձայնագիրը, իսկ պայմանագրի և որակավորման ապահովումների ներկայացման համար խնդրել է լրացուցիչ ժամանակ:

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ն, առաջնորդվելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշման հավելված 1-ի (Գնումների գործընթացի կարգ) 33-րդ կետի 12-րդ ենթակետով, ս/թ հունիսի 3-ին ծանուցել է ՕՕՕ «ՕԿԲՄ»-ին պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ՝ ծանուցումը նույն օրը հրապարակելով տեղեկագրում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման Հավելված 1-ի (Գնումների գործընթացի կազմակերպման կարգ) 45-րդ կետի համաձայն Ձեր դիտարկմանն ենք ներկայացնում ՕՕՕ «ՕԿԲՄ»-ի կողմից գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորությունների խախտումն հիմնավորող փաստաթղթերը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/158 ընթացակարգի շրջանակներում 21.06.2021թ. ժամը 10:25-ին և 06.07.2021թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/158 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/158 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի և «ՕԿԲՄ» ՕՕՕ-ի միջև 30.04.2021թ. կնքվել է գլխավոր շրջանառու պոմպերի (ԳՑՀ- 317) պահեստամասերի մատակարարման թիվ HAEK-BMAPDzB-1/21-01/070 պայմանագիրը, որի համաձայն՝ «ՕԿԲՄ» ՕՕՕ-ն պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-

ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ Ապրանքի մատուցման ժամկետ է սահմանվել՝ ապրանքները մատակարարել ֆինանսական միջոցների նախատեսման դեպքում, կնքվելիք համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 240 օրվա ընթացքում:

3. Պայմանագրի շրջանակներում ֆինանսական միջոցների առկայությամբ պայմանավորված Պատվիրատուն 06.05.2021թ.-ին Ընկերությանն է ուղարկել Պայմանագրի թիվ 1 համաձայնագիրը:

4. Պատվիրատուին ուղղված 27.05.2021թ. թիվ 04/206 գրությամբ «ՕԿԲՄ» ՕՕՕ-ն մասնավորապես հայտնել է, հետևյալը. «06.05.2021թ.-ին ստացվել է Ձեր կողմից ուղարկված Պայմանագրի թիվ 1 համաձայնագիրը, սակայն Ռուսաստանի Դաշնության նախագահի հրամանի համաձայն՝ ՌԴ-ում 2021թ. մայիս ամսին հայտարարվել է ոչ աշխատանքային օրեր, որով պայմանավորված «ՕԿԲՄ» ՕՕՕ-ն սահմանված ժամկետում հնարավորություն չի ունեցել Պայմանագրի շրջանակներում ապահովելու բանկային երաշխիքի տրամադրումը, ուստի խնդրում եմ վերանայել ժամկետի երկարաձգումը 10 աշխատանքային օրով»:

5. «ՕԿԲՄ» ՕՕՕ-ին ուղղված 03.06.2021թ. թիվ Ե/40/1436-21 գրությամբ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն մասնավորապես հայտնել է հետևյալը.

«Պայմանագրի շրջանակներում «ՕԿԲՄ» ՕՕՕ-ին 06.05.2021թ. ներկայացվել է Պայմանագրի թիվ 1 համաձայնագրի նախագիծը, որը 27.05.2021թ. ներառյալ Ընկերությունը պետք է հաստատեր և ներկայացներ Պատվիրատուին, սակայն Ընկերության կողմից հաստատված համաձայնագիրը, պայմանագրի և որակավորման ապահովումները սահմանված ժամկետում չեն ներկայացվել, ուստի Կարգի 33-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ Պայմանագիրը լուծվում է»:

6. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 04.06.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության՝ 15.06.2021թ. թիվ 26/26-1/9633-2021 գրությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 08.06.2021թ. թիվ Ε/40/1462-21 գրությունը և կից փաստաթղթերը, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին

մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 33-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ ***պայմանագրով (նախագծով) սահմանվում է նաև, որ եթե պայմանագիրը կնքվել է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա,*** սակայն տվյալ տարում նախատեսված չեն կամ նախատեսված են ավելի քիչ ֆինանսական միջոցներ, քան պայմանագրի գինն է, ***ապա պայմանագրում նախատեսվում է, որ հետագայում ապրանքների մատակարարումը, աշխատանքների կատարումը կամ ծառայությունների մատուցումն իրականացվում են համաձայնագիր կնքելու միջոցով:*** Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա պատվիրատուի կողմից համաձայնագիր կնքվում է, եթե պայմանագիր կնքած անձի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով սույն կարգի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, պայմանագրի կողմը համաձայնագիրը կնքում, իսկ ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները պատվիրատուին ներկայացնում է ***համաձայնագիր կնքելու մասին ծանուցումն ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:*** Հակառակ դեպքում պայմանագիրը պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է.

Պայմանագրի 8.13-րդ կետով սահմանվում է, որ ***Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Ընդ որում,*** Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է

գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Գնորդի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Վաճառողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովները Գնորդին ներկայացնում է ***համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:***

Այսպես, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի և «ՕԿԲՏՄ» ՕՕՕ-ի միջև 30.04.2021թ. կնքվել է գլխավոր շրջանառու պոմպերի (ГЦН- 317) պահեստամասերի մատակարարման թիվ HAEK-BMAPDzB-1/21-01/070 պայմանագիրը, որի համաձայն՝ «ՕԿԲՏՄ» ՕՕՕ-ն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ Ապրանքի մատուցման ժամկետ է սահմանվել՝ ապրանքները մատակարարել ֆինանսական միջոցների նախատեսման դեպքում, կնքվելիք համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 240 օրվա ընթացքում:

Պայմանագրի շրջանակներում ֆինանսական միջոցների առկայությամբ պայմանավորված Պատվիրատուն 06.05.2021թ.-ին Ընկերությանն է ուղարկել Պայմանագրի թիվ 1 համաձայնագիրը:

Պատվիրատուին ուղղված 27.05.2021թ. թիվ 04/206 գրությամբ «ՕԿԲՏՄ» ՕՕՕ-ն մասնավորապես հայտնել է, հետևայլը. «06.05.2021թ.-ին ստացվել է Ձեր կողմից ուղարկված Պայմանագրի թիվ 1 համաձայնագիրը, սակայն Ռուսաստանի Դաշնության նախագահի հրամանի համաձայն՝ ՌԴ-ում 2021թ. մայիս ամսին հայտարարվել է ոչ աշխատանքային օրեր, որով պայմանավորված «ՕԿԲՏՄ» ՕՕՕ-ն սահմանված ժամկետում հնարավորություն չի ունեցել Պայմանագրի շրջանակներում ապահովելու

բանկային երաշխիքի տրամադրումը, ուստի խնդրում եմ վերանայել ժամկետի երկարաձգումը 10 աշխատանքային օրով»:

«ՕԿԲՏՄ» ՕՕՕ-ին ուղղված 03.06.2021թ. թիվ Ե/40/1436-21 գրությամբ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն մասնավորապես հայտնել է հետևյալը.

«Պայմանագրի շրջանակներում «ՕԿԲՏՄ» ՕՕՕ-ին 06.05.2021թ. ներկայացվել է Պայմանագրի թիվ 1 համաձայնագրի նախագիծը, որը 27.05.2021թ. ներառյալ Ընկերությունը պետք է հաստատեր և ներկայացներ Պատվիրատուին, սակայն Ընկերության կողմից հաստատված համաձայնագիրը, պայմանագրի և որակավորման ապահովումները սահմանված ժամկետում չեն ներկայացվել, ուստի Կարգի 33-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ Պայմանագիրը լուծվում է»:

Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 04.06.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

Այսպիսով՝ Կարգի 33-րդ կետի 12-րդ ենթակետով սահմանվում է, որ ***պայմանագրով (նախագծով) սահմանվում է նաև, որ եթե պայմանագիրը կնքվել է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա պայմանագրում նախատեսվում է, որ հետագայում ապրանքների մատակարարումը, աշխատանքների կատարումը կամ ծառայությունների մատուցումն իրականացվում են համաձայնագիր կնքելու միջոցով:*** Ընդ որում, պայմանագրի կողմը համաձայնագիրը կնքում, իսկ ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները պատվիրատուին ներկայացնում է ***համաձայնագիր կնքելու մասին ծանուցումն ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:***

Պայմանագրի 8.13-րդ կետով սահմանվում է, որ ***Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով:*** Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովները Գնորդին ներկայացնում է ***համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:***

Այսպիսով՝ վերը նշված իրավակարգավորումներով սահմանվում է հստակ ժամկետ համաձայնագիրը կնքելու համար, որը չպահպանելու դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:***

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Պատվիրատուն ֆինանսական միջոցների առկայությամբ պայմանավորված 06.05.2021թ. ծանուցել է Ընկերությանը Պայմանագրի թիվ 1 համաձայնագիրը՝ առաջարկելով ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում կնքված համաձայնագրի երկուական օրինակը Պատվիրատուին ներկայացնել, մինչդեռ, գործում եղած փաստերի համաձայն, արձանագրում եմ, որ Ընկերությունը Կարգի 33-րդ կետի 12-րդ ենթակետով և Պայմանագրի 8.13-րդ կետով սահմանված ժամկետում, այն է՝ ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում չի կնքել համաձայնագիրը և Պատվիրատուին չի ներկայացրել պայմանագրի և որակավորման ապահովումները, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի լուծմանը:

Այսպիսով՝ վերը նշված փաստական հանգամանքներով պայմանավորված, գտնում եմ, որ «ՕԿԵՏՄ» ՕՕՕ-ն թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, քանի որ Ընկերությունը սահմանված ժամկետում չի կնքել համաձայնագիրը և Պատվիրատուին չի ներկայացրել պայմանագրի և որակավորման ապահովումները, որի հետևանքով Պայմանագիրը լուծվել է:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Նույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 15.06.2021թ. թիվ 26/26-1/9633-2021 գրությամբ «ՕԿԲՏՄ» ՕՕՕ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «ՕԿԲՏՄ» ՕՕՕ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**